Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
օգոստոսի 24-ի N 1126-Ն
որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Իր բնակության վայրից դուրս մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ վայրում անցկացվող մրցութային հանձնաժողովի նիստին մասնակցելիս՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ձևավորված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով) անդամին փոխհատուցվում է մրցութային հանձնաժողովի նիստի անցկացման վայր մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսը:

2. Իր բնակության վայրից դուրս 30 կիլոմետրից ավելի հեռավորությամբ վայրում անցկացվող մրցութային հանձնաժողովի նիստին մասնակցելիս՝ մրցութային հանձնաժողովի անդամին փոխհատուցվում են մրցութային հանձնաժողովի նիստի անցկացման վայր մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսն ու օրապահիկը, իսկ նույն օրը վերադառնալու հնարավորության բացակայության դեպքում՝ նաև գիշերավարձը:

3. Մրցութային հանձնաժողովի անդամին փոխհատուցման ենթակա ճանապարհածախսի առավելագույն չափ է համարվում համապատասխան միկրոավտոբուսային երթուղու սակագինը:

4. Մրցութային հանձնաժողովի անդամին փոխհատուցման ենթակա օրապահիկի չափ է համարվում 3000 դրամը:

5. Մրցութային հանձնաժողովի անդամին փոխհատուցման ենթակա գիշերավարձի առավելագույն չափ է համարվում՝ Երևան քաղաքի դեպքում՝ 25000 դրամը, իսկ մարզերի դեպքում՝ 20000 դրամը:

6. Սույն հավելվածի 3-5-րդ կետերով նախատեսված գումարների չափերը չեն ներառում վճարման ենթակա հարկերը:

7. Մրցութային հանձնաժողովի անդամի կատարած ծախսերի փոխհատուցումը տրամադրվում է մրցութային հանձնաժողովի անդամի կողմից մրցութային հանձնաժողովի նիստին հաջորդող մեկամսյա ժամկետում՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացված դիմումի հիման վրա, որին, ճանապարհածախսը և գիշերավարձը փոխհատուցելու նպատակով, կցվում են այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

8. Ճանապարհածախսի վճարումը հաստատող փաստաթուղթ է համարվում տրանսպորտային միջոցի տոմսը, դրա բացակայության դեպքում՝ ծառայություն մատուցած ընկերության կողմից տրամադրված՝ մեկնելու և վերադառնալու վերաբերյալ համապատասխան հաստատող փաստաթուղթը: Գիշերավարձի վճարումը հաստատող փաստաթուղթ է համարվում հյուրանոցում գտնվելու ժամանակահատվածը հաստատող՝ հյուրանոցի կողմից տրված փաստաթուղթը և գիշերավարձի վճարումը հիմնավորող փաստաթուղթը (բանկային հաշվից քաղվածք, կանխիկ վճարման անդորրագիր և այլն) կամ գիշերավարձի վճարումը հիմնավորող փաստաթուղթը (բանկային հաշվից քաղվածք, կանխիկ վճարման անդորրագիր և այլն) և հյուրանոցի նախնական ամրագրման փաստաթուղթը:

9. Մրցութային հանձնաժողովի անդամի կատարած ծախսերի համար փոխհատուցումը տրամադրվում է դիմելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Մրցութային հանձնաժողովի անդամի կատարած ծախսերի փոխհատուցումն ապահովվում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ